

և զուտ երեակայական ուրուատեսիլների անձնատուր է, որ ուրիշ կանոն չի ճանաչում՝ քան բնական գրգիռներն ու ազդումները, ուրիշ կրօն չի դաւանում՝ քան բնական միամիտ հաւատքը, որ յօժարամիտ հեթանոսական է. իսկ յաճախ՝ նա և անրարոյական. մի խօսքով այն Անգլիան՝ ինչպէս որ նկարագրել են Բէն - Ջոնսօն, Թոմին, Փլետչեր, Շեքսպիր, Սպէնսէր և միւս բազմաթիւ բանաստեղծների փաղանդը՝ որ այդ հոյի վերայ է ընթացել յընթացս յիսուն ամաց. միւս՝ որ գործնական կրօնի հիմքը ձգեց, թափուր էր բնազանցական կարողութիւնից, հոգով ու մարմնով ընկլմած էր քաղաքականութեան էնեկիրներում, կարգասէր էր և հակամէտ էր աւելի չափաւոր՝ առողջադատ՝ հանրօգուա՝ նեղ կարծիքների. որ գովում է ընտանեկան առաքինութիւնները, զինուել է բարոյական խստապատուէր խըրատներով և կաշկանդուել այդ խրատների մէջ, որ իւր նուիրական զբաղմունք է գարձուցել վերին աստիճան զօրութեան, ճոխութեան և ազատութեան հասուցած՝ արձակ շարադրութիւնը: Միլտոնի շարադրութեանց ոճը և գաղաքարները պէտք է համարուին գրականական յիշատակարաններ. նոցա մէջ ամիոփուած է անցեալը, նոքա կանխում են ապագան. այնպէս որ այդ մի երկասիրութեան մէջ կարելի է կարդալ շատ դարերի և ամբողջ ազդի կրած վիճակներն ու զգացումները:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթոլ-զիկոս ամենայն Հայոց բարեհաճեցաւ ամսոյս 16-ին Բիւրականի ամարանոցից վերադառնալ ի Ս. Էջմիածին երեկոյեան ժամից յետոյ:

Բարեպաշտուհի տիկին Եւայ Յարութիւնեան Մանուէլեանց Բագուեցի նուիրել է մի հարիւր ըսուբլի Մայր Յաճարի վերանորոգութեան ի յիշատակ իւր ամենսին Գրիգորի:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Յուլիս 1 Ա. Այնօդն հիմնուելով Վրաստանի և Խմբէժի Հայոց վիճակային կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համար 6469 ի 26 Դեկ. 1887 ամի, թոյլատրեց նմին գործադրել իւր որոշումն, այն է Ախալցխայ քաղաքի Ս. Վարդանանց եկեղեցւոյ նախկին երեցփոխան Աղէքսանդրն Բօրակչեան ենթարկել քաղաքական դատարանի, և պահանջել նորանից եկեղեցւոյ հաշիւն և գոյքն որ զլանում է յանձնել նորոգ երեցփոխանին:

Յուլիս 15 Ա. Սինօդն հիմնուելով Բեսարաբիոյ և նոր Նախիշեանի Հայոց վիճակային կոնսիստորիայի յայտարարութեան վերայ Համար 921 ի 25 Մարտի տարւոյս, որոշեց Սուչավայի Դեռնդ Աւագ քահանայի մերձաւոր ազգակցութեան չհասպակն Յակոբայ Հաճի Մարգարեանցի ընդ Մանիայ դստեր Կարապետի Թէոդորովիչի Համարել անվաւէր, իսկ պոակող Դեռնդ քահանային Ենթարկել պատժի Կ. Պօլսոյ ամենապատիւ Ա. Պատրիարքի և կրօնական ժողովի ձեռօք, ի խրատ և ի զգուշութիւն այլոց: Նոյնպէս և Օրէէ. Քաղաքի Կորուպետ քահանայն Զորայեանց իւր խարդախ վկայականի տուչութեան Համար Ենթարկել ապաշխարանաց ըստ նկատողութեան յիշեալ Կոնսիստորիային:

Յուլիս 22 Ա. Սինօդն հիմնուելով Վրաստանի և Խմէրէթի վիճակային կոնսիստորիայի յայտարարութեան վերայ Համար 2771 ի 6 Յուլիսի տարւոյս, Ենթարկեց Երեքամեայ ապաշխարանաց Սեանայ վանքում Դանիէլ քահանայն Տ. Գէորգեանց Տաշ Բաշ գեղջ՝ իւր յանդուգն գործոց և գայթակղեցաւցիչ վարսոց Համար:

Յուլիս 25 Ա. Սինօդն հիմնուելով Շամախւոյ Հայոց վիճակային Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ Համարու 559 ի 4 Յուլիսի տարւոյս, Թոյլասարեց պ. Յովհաննէսի Զավադէան Խալափեանց բառնալ Նուքուրջի գեղջ իւր Շինած Ա. Յովհաննէս Եկեղեցւոյ փայտաշէն ծածկն և ծածկել մեշտիւ իւր ծախիք ըստ իւր ցանկութեան:

Յուլիս 29 Ա. Սինօդն հիմնուելով Երեանայ թեմոկալի փոխանորդի Գեր. Սուքիսա եպիսկոպոսի յայտարարութեան վերայ ընդ Համարու 169 և 409 որովք խնդրէ, պարտաւորացնել բոլոր քաղաքաց և գիւղօրէից չորս աստիճանաւոր անձանց փոխել աշխարհական զգեստը հոգեորական զգեստի, և ծառայել Եկեղեցւոյն, սպասուհարկելով քահանային ամենայն օրինակատարութեանց միջոց, թէ Եկեղեցւոյ մէջ և թէ դուրս, իսկ անհնագանդներին զրկել հոգ. կոչումից, և հոգեորականի զգեստ հագնող չորս աստիճան ունեցող սպասաւորներին սահմանել մասն քահանայից Ժամոցադրամոց և գանձանակաց, որք պարտաւորեն արձանագրել կանոնաւորութեամբ ծնելոց պօտեկելոց և ննցեցնելոց անուններն մատեանների մէջ, նաև քահանայից արգելել իրանց հետ չտանել մատաղահաս տղաներին շահու ակնկալութեամբ տնօրհների և այլ օրինակատարութեանց միջոց, այլ միայն չորս աստիճանաւորներին տանել նորանց շահելու համար, Սինօդն թոյլասարեց Գեր. փոխանորդի թեմակալին կարգադրել ըստ իւրում առջարկութեան: